եւ տեսնում էի, թէ որպէս կայծերը հրեղէն օձերի նման դուրս էին ցայտում ամպերի միջից: Ինչո՞ւ օդի խաղաղ ժամանակը չէին յայտնւում նրանք, բայց երբ սկսւում էր փոթորիկը, երբ սկսւում էր տարերքի միմեանց հետ ընդհարումը, միմեանց հետ զարկոելը, — այն ժամանակ միայն յայտնւում էին երկնքի կայծերը: Ինձ թւում էր, թէ այնտեղ կատարւում էր միեւնոյնը, ինչ որ կատարւում էր իմ քեռու դարբնոցի մէջ...

Դ. ՈՐՍՈՐԴԸ

Անցան մի քանի ամիսներ այն օրից, երբ հարկապահանջները ծախեցին մեր տան կայքը, — անցան մի քանի դա՛ռն եւ մահաբե՛ր ամիսներ...

Մեր շուրջը տիրում էր արդէն ձմեռ, որ սառն ձեռքով խլեց դաշտերի եւ լեռների բոլոր գեղեցկութիւնները: Ցուրտը օրըստօրէ սաստկանում էր եւ մուգ — մոխրագոյն երկնքի երեսը աւելի եւ աւելի խոժոռ կերպարանք էր ստանում: Արեգակը, կարծես, խռովել էր երկրից եւ չէր ուզում իր դէմքը ցոյց տալ: Վերջապէս եկաւ ձիւնը եւ թանձր պատանը տարածեց երկրի վրայ:

Մութ փոթորկային գիշեր էր: Դրսում քամին կատաղի կերպով մռնչում էր եւ նորեկ ձիւնի փխրուն տարափը ահագին քանակութեամբ տարուբերում էր մի տեղից միւս տեղ: Մեր խրճիթը դողդողում էր սարսափելի մրրիկից: Մտածում էինք, ահա թուֆանը հիմքից կխլէ նրան եւ խառնելով ձնային լեռների հետ, կտանէ հեռու եւ հեռու եւ կփշրէ դաշտերի մէջ:

Մայրս նստած էր իւղային ճրագի մօտ, կարում էր մի բան: Նա այնքան խորին կերպով ընկղմուած էր իր մտածութիւնների մէջ, որ ամենեւին չէր զգում, թէ ինչ էր կատարւում դրսումը: Մարիամը եւ Մագթաղը երկար լաց եղան, որ մի բան ուտեն, եւ երբ ոչինչ չգտան, այնպէս քաղցած քնեցին: Ես նստած էի վառարանի մօտ եւ շուտ-շուտ դնում էի նրա մէջ ցամաք տերեւներ եւ չոր մացառներ, որ քոյրերիս հետ հաւաքել էինք այգիներից: Նրանք յանկարծ բռնկում էին, բոցավառւում էին եւ քանի որպէից յետոյ կրկին հանգչում, մոխիր էին դառնում: Այդ խաղը պատճառում էր ինձ աւելի զուարճութիւն, քան խրճիթի մէջ որեւիցէ տաքութիւն:

Դուռը սաստիկ զարկեցին: Մայրս չլսեց. ես գնացի բաց արի: Ներս վազեց սպիտակ գնդակի նման մի բան, երբ անցաւ շեմքից, կատոի պէս թափ տոեց իր մարմինը եւ ձիւնը բամբակի գլուջների նման թափոեց ցած:

— Տo, Մարo, գետինը՛ մտնես, որտեղի՞ց եկար, — հարցրի ես: